

# ՀՀ ՏԿԶ նախարարի տեղակալ Արթուր Խաչատրյանը հանդիպեց ՀՀ Վայոց ձորի մարզից ներդրումային ծրագրեր ներկայացրած գործարարների հետ

02.03.2017



Այսօր ՀՀ Վայոց ձորի մարզպետարանում, մասնակցությամբ՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի և ՀՀ ՏԿԶ նախարարի տեղակալ Արթուր Խաչատրյանի, տեղի ունեցավ հանդիպում Վայոց ձորի մարզից ներդրումային ծրագրեր ներկայացրած գործարարների հետ: Հանդիպմանը մասնակցում էին ՀՀ ՎՁ մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Արամ Կոստանյանը, ՀՀ ԿԲ ֆինանսական համակարգի զարգացման բաժնի պետ Լիզիա Ղազարյանը, նույն բաժնի հետազոտողներ Թամարա Հաբեթյանը և Դավիթ Կիրակոսյանը, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի Վայոց ձորի մասնաճյուղի տնօրեն Սուրեն Գասպարյանը և մասնաճյուղի ավագ փորձագետ Լիլիթ Հակոբյանը:

Բացելով հանդիպումը ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը հաջողություն մաղթեց հանդիպման մասնակիցներին, համոզումով, որ քննարկումը կլինի շահագրգիռ, իսկ արդյունքները՝ գոհացուցիչ:

Փոխնախարար Արթուր Խաչատրյանը խոսեց Վայոց ձորից ներկայացրած և ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած ներդրումային ծրագրերի մեկնարկների հնարավոր ժամկետների մասին: Հանդիպման մասնակիցները ներկայացրին ծրագրերից ակնկալվող արդյունքների և ծրագրերը կյանքի կոչելու հնարավորությունների մասին:

Փոխնախարարը նշեց, որ արդեն տրվել է ծրագրերի իրականացման մեկնարկը և քայլ առ քայլ կիրականացվեն հավանության արժանացած ներդրումային բոլոր ծրագրերի ֆինանսավորումները: